Արձանագրություն №4

ԵԻՄԻ-ԳՀԱՊՁԲ19/06 ծածկագրով գնահատող 6/ 4 հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի 25 նոյեմբերի 2019 ժամը 13:00

Մասնակցում էին՝

Հանձն. նախագահ՝ **Ջոն Կարապետյան**

Անդամներ՝ **Էդուսարդ Մուրադյան**

Կարլեն Ղազարյան

Հանձն. քարտուղար՝ **Ռոզա Կարապետյան**

ԵԻՄԻ-ԳՀԱՊՁԲ19/06 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքների հաստատման մասին

1. ԵԻՄԻ-ԳՀԱՊՁԲ19/06 ծածկագրով գնման ընթացակարգի հայտ էր ներկայացրել երեք մասնակից՝

1.1 «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ:

1.2 «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ն:

1.3 «Ռեկա » ՍՊԸ- ի, փաթեթը մերժվեց գնահատող հանձնաժողովի անդամների կողմից՝ կային սխալներ փաստաթղթերում:

2.1.1 Առաջին տեղը զբաղեցրած մասնակից ընտրվեց «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ն, համապատասխանաբար երկրորդ տեղը զբաղեցրեց «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ:

2.1.2. «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ -ի կողմից ներկայացվել են առաջին տեղը զբաղեցրած մասնակցից հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը սակայն հանձնաժողովի գնահատման արդյունքների հիման վրա առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում *ԵԻՄԻ-ԳՀԱՊՁԲ19/06* ծածկագրով հրավերի պահանջներին, չնայած որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի փաթեթում Գնային առաջարկում նշված էր հրավերով պահաջված ապրանքը:

2.1.3 Մասնակցին տրվեց մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունները շտկելու, սակայն նշված ժամկետում անհամապատասխանությունները չշտկվեցին և առաջին տեղ զբաղեցնող մասնակից համարվեց սույն ընթացակարգի երկրորդ տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ն:

2.2.1 «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ - ի վերաբերյալ ուղարկվեց հարցում ՊԵԿ:

2.2.2 Հաշվի առնելով «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ -ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացվել է դրական եզրակացությունը և հանձնաժողովի գնահատման արդյունքները, *ԵԻՄԻ*-ԳՀԱՊՁԲ19/06 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ին՝ **առաջին տեղ:**

3. **Որոշեցին.**

1. Քանի որ հայտ էին ներկայացրել 3 մասնակից ուստի Օրենքի 10 Հոդվածի համաձայն կիրառելի է անգործության ժամկետ (5 օրացուցային օր 01.12.2019 ներառյալ):

2. ԵԻՄԻ-ԳՀԱՊՁԲ19/06 ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող ճանաչված «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ -ի հետ կնքել գնման պայմանագիր պահպանելով սահմանված անգործության ժամկետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ **3**, դեմ **0**:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Ջոն Կարապետյան _____

Հաձնաժողովի անդամներ՝ Էդուարդ Մուրադյան _____

Կարլեն Ղազարյան _____

Հանձ. քարտուղար Ռոզա Կարապետյան _____